ՄՀԱ.

Առաջին ակնարկութիւնը Պոլսոյ Գրիգոր Գ. պատրիարքին նկատմամբ ըլլալու է։ Երկրորդ մասով Ցոյն Պատրիարքարանի ներքին խռովութիւնը կը պատմուի։

Գերաւելիծար Գերյարգելի Աբրայ նոր վերոյ և. բարեւնապետի տեառն տեառն Ստեփաննոս վարդապետի ողջոյն

Թղթ. ՃԺԷ.

Օգոստոսի 14 յաւուր ուրբաթու, (ասեն և հաստատեն) թէ պատրիարքն Հայոց վերստին կապայ զգեցեալ է, քանզի հայք կամէին փոխել զնա՝ իբր թէ նա եղև պատճառ կործանման եկեղեցւոյն։ Իսկ նա տուեալ առզուհալ՝ նոր ֆէրման առեալ, և զգեցեալ կապայ, վերստին նստաւ յաթոռ պատրիարգութեանն։ Ի ՃԺԵ թուղթս գրեցի թէ ոմն տաճիկ պէյ խնդրեալ է ի պատրիարգէն իբր 800 ղռուշ. և ի չտալն նորա, էր կործանեալ զեկեղեցին։ Բայց ոմանք ևս ասեն թէ ոչ վասն 800 ղռուշիցն արար, զի չէր կարօտ այնքան դրամոց, այլ՝ հայքն արարեալ են նմա այլ ինչ, և նա վասն վրէժխնդրութեան իւրոյ արար զայն։ Բայց հայքն հանին զձայնն ՃՃ ղռուշիցն ի ծածկել զմիւսն։

Շուրջ ի սկզբան օգս.ի, ԺԲ մէտրոփոլիթքն յունաց ժողովին ի միասին առնել զխորհուրդ փոխելոյ զպատրիարգն յունաց։ Քանզի ի Կոստանդնուպոլիս հանապազ նստին երկուտասան մէտրոփոլիթք առ պատրիարգին, և զթեմս իւրեանց կառավարեն փոխանորդօք իւրեանց. առեալ են ինքեանք զհասն ի թեմից իւրեանց։ Արդ՝ պատրիարգն յունաց իմացաւ զծածուկ ժողովելն մէտրոփոլիթացս. և ինքն ի ծածուկ ետ արզուհալ թագաւորին վասն ԺԲ մէտրոփոլիթացն։ Իսկ թագաւորն ընթերցեալ զառզուհալն, ոչինչ տայ պատասխան։ Ապա զկնի աւուրց ինչ տան արզուհալ զպատրիարգէն, և մէտրոփոլիթքն ոչ գիտելով թէ պատրիարգն տուեալ է արզուհալ։ Զկնի տալոյ նոցա զարզուհալն, առաքէ թագաւորն առ փաշայն. և ի փաշայէն զայ ֆէրման առ պատրիարգն, թէ վաղվաղակի և փութով ԲԺ.ան [երկուտասան] մէտրոփոլիթքն չուեսցեն ի թեմս իւրեանց, և մի նստցին ի կոստանդնուպոլիս։ Եւ պատրիարգն յունաց իսկոյն հրամայէ նոցա երթալ ի թեմս իւրեանց, տուեալ նոցա մէօհրէթ զաւուրս աւուրս։ Ապա ելին չուեցին ի թեմս իւրեանց. և այժմ չիք մէտրոփոլիթ ի կոստանդնուպոլիս, բայց եթէ գտցի մանզուլ եղած, այսինքն եթէ չունիցի թեմ, այն չէ փոյթ։...

1767 յօգոստ. 18 ի կոստանդնուպոլիս — Ն. Ս. Հ. Յակոբոս վրդ. Զամչեանց. Մխիթարեան

ՄՀԲ.

Տապանագիրն է մեր Հ. Թադէոս վարդապետ Գրիգորեանի, որ Օրթագիւղի մէջ մեռած է՝ ժանտամահէ բռնուելով։

Գիտեմ զայն՝ որ վերջն աշխարհին
Առնուլ միոյն՝ թողուլ միւսին.
Ով աղէտիցս, անհնարին
Աստ զերկոսեան՝ զեղբարսն առին